Հավելված 1

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՏՐԻՑԱՅՈՎ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գլուխ I. Մասնակիցների հիմնական իրավունքներ, հավասար վերաբերմունք մասնակիցների նկատմամբ և նշանակալից մասնակիցների պարտականություններ

ՍԿԶԲՈՒՆՔ I.1. Կազմակերպության կառավարմանը մասնակցելու մասնակցի իրավունքը

Կազմակերպությունը պարտավոր է ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ՝ նրանց կողմից կազմակերպության կառավարմանը մասնակցելու ու քվեարկելու իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ձևավորելու և տեղեկացված որոշում կայացնելու համար:

<u>Հայտարարագրում</u>

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.1.1.	Մասնակիցն ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ պատշաճ ծանուցվում է ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվի, վայրի, ձևաչափի և օրակարգի մասին, ինչպես նաև հնարավորություն է ունենում ծանոթանալ ընդհանուր ժողովում քննարկվելիք որոշումների նախագծերին, փաստաթղթերին և անհրաժեշտ այլ տեղեկատվությանը:				**Համապատասխանում է**
I.1.2.	Ընդհանուր ժողովի հրավիրման վայրն ու օրը (ժամը) չեն սահմանափակում ընդհանուր ժողովին մասնակցի մասնակցությունը:				**Համապատասխանում է**
I.1.3.	Ընդհանուր ժողովի վարման կանոններն ու ընթացակարգերը հավասար վերաբերմունք են ապահովում միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:				**Համապատասխանում է**

I.1.4.	Ընդհանուր ժողովի վարման կանոններն ապահովում են ընդհանուր ժողովում ձայների պատշաճ հաշվարկն ու հաշվառումը, ինչպես նաև քվեարկության արդյունքների ժամանակին հրապարակումը:	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Համապատասխանում է** /Ընկերությունն ունի մեկ բաժնետեր/
I.1.5.	Ընդհանուր ժողովի վարման կանոնները և ընթացակարգերը հրապարակվում են կազմակերպության համացանցային էջում:	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Չի համապատասխանում** /Ընկերությունն ունի մեկ բաժնետեր, բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է ՀՀ ՏԿԵՆ-ին/
I.1.6.	Անկախ քվեարկության կարգից՝ մասնակիցների ձայներին տրվում է հավասար նշանակություն:	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Համապատասխանում է**
I.1.7.	Ընդհանուր ժողովում մասնակիցը հնարավորություն ունի հարցեր տալ խորհրդի և գործադիր մարմնի անդամներին, աուդիտորին և ստանալ պատասխան, այդ թվում՝ գրավոր ձևով:	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Համապատասխանում է**
I.1.8.	Ընդհանուր ժողովի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեն հաղորդակցվելու միմյանց հետ՝ քվեարկության դրված հարցի վերաբերյալ որոշում կայացնելու կամ հարցի էությունը պարզաբանելու համար:	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Համապատասխանում է**

I.1.9.	Կազմակերպությունը հավասարակշռում է համատեղ ներկայությամբ և հեռավար ժողովների գումարումը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է մասամբ** /հիմնականում Ժողովները գումարվում են համատեղ ներկայությամբ/

ՍԿԶԲՈՒՆՔ I.2. Կազմակերպության խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման մասնակցի իրավունքը

Կազմակերպության կորպորատիվ կառավարման համակարգը պետք է խթանի մասնակցի արդյունավետ մասնակցությունը խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման և խորհրդի անդամների ընտրության գործընթացին:

<u>Հայտարարագրում</u>

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
I.2.1.	Մասնակիցը ողջամիտ ժամկետներում ամբողջական և բավարար տեղեկատվություն է ստանում խորհրդի անդամների թեկնածուների մասնագիտական որակավորման և փորձառության, անցյալում և ներկայում զբաղեցրած պաշտոնների, կազմակերպության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) նշանակալից մասնակից լինելու մասին:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է** **/Ընկերությունն ունի մեկ բաժնետեր, Խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության առ 6 նոյեմբերի 2003 թվականի N 1694-Նորոշումով/**

ՍԿԶԲՈՒՆՔ I.3. Կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի անդամների վարձատրության քաղաքականությունը

Մասնակիցը պետք է հնարավորություն ունենա կարծիք հայտնել խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ ընդհանուր ժողովում քվեարկության միջոցով:

<u>Հայտարարագրում</u>

	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
I.3.1.	Մասնակիցը կարծիք է հայտնում խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ ընդհանուր ժողովում քվեարկելով:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է մասամբ /«ՀԱԷԿ» ՓԲԸ Խորհուրդը չի վարձատրվում/**

ՍԿԶԲՈՒՆՔ I.4. Շահաբաժին ստանալու մասնակցի իրավունքը

Կազմակերպությունը միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի համար պետք է ապահովի հավասար և արդար վերաբերմունք մասնակցելու կազմակերպության շահույթի բաշխմանը շահաբաժին ստանալու միջոցով:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.4.1.	Շահաբաժինների վճարման ընթացակարգերը ապահովում են հավասար վերաբերմունք միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:				**Համապատասխանում է** **/Ընկերությունը շահութաբաժինների վճարումը իրականացնում է ՀՀ Կառավարության 2001թ. դեկտեմբերի 5-ի № 1194 որոշումով սահմանված կարգով:/**

ՍԿԶԲՈՒՆՔ I.5. Նշանակալից բաժնետիրոջ պարտականությունները

Կազմակերպությունն ի շահ նշանակալից մասնակիցների կամ անմիջականորեն նշանակալից մասնակիցների կողմից կատարվող չարաշահումներից պետք է պաշտպանի փոքր բաժնեմասնակցություն ունեցող մասնակիցներին:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
I.5.1.	Կազմակերպության նշանակալից մասնակիցը բացահայտում է կազմակերպության հետ կնքվող գործարքներում կամ կազմակերպության վրա ուղղակիորեն ազդող հարցերում իր ուղղակի, անուղղակի կամ երրորդ անձանց անունից հանդես գալու իր հնարավոր էական շահը և չի մասնակցում տվյալ գործարքի կամ հարցի հետ կապված որոշման ընդունմանը:				**Համապատասխանում է** Ընկերությունն ունի մեկ բաժնետեր, բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է ՀՀ ՏԿԵՆ-ին
I.5.2.	Կազմակերպության նշանակալից մասնակիցը բացահայտում է խորհրդի և գործադիր մարմնի անդամների հետ իր ունեցած փոխկապակցվածությունը:				**Համապատասխանում է** Ընկերությունն ունի մեկ բաժնետեր, բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է ՀՀ ՏԿԵՆ-ին

Գլուխ II. Խորհուրդ

ՍԿԶԲՈՒՆՔ II.1. Խորհրդի առանցքային գործառույթները

Կազմակերպությունը պետք է առաջնորդվի արդյունավետ և կառուցողական խորհրդի կողմից, որի դերն է նպաստել կազմակերպության երկարաժամկետ հաջողությանը, մասնակիցների համար արժեքի ստեղծմանը և կազմակերպության շահակիցներին աջակցմանը:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.2.1.	Խորհուրդն իրականացնում է կազմակերպության ռազմավարական առաջնորդումն ու գործադիր մարմնի վերահսկումը:				**Համապատասխանում է**

ՍԿԶԲՈՒՆՔ II.3. Խորհրդի ոչ գործադիր անդամները

Խորհրդի ոչ գործադիր անդամները պետք է իրենց կառուցողական վարքագծով խնդիրներ առաջադրեն գործադիր մարմնին, ուղղորդեն կազմակերպության ռազմավարական զարգացումը, գործադիր մարմնին առաջարկեն իրենց խորհրդատվական աջակցությունը:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
II.3.1.	Խորհրդի ոչ գործադիր անդամները խորհրդում մեծամասնություն են կազմում:				**Համապատասխանում է**

II.3.2.	Խորհրդի ոչ գործադիր անդամները խորհուրդ են բերում նոր փորձառություն, հատկապես՝ կազմակերպության մարտահրավերներն ընկալելու, ռազմավարական զարգացմանն աջակցելու, գործադիր մարմնին վերահսկելու և կատարողականը գնահատելու, տեղեկատվության արժանահավատության, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման հուսալիության, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության, խորհրդի և գործադիր մարմնի սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորման, գնահատման ու վարձատրության քաղաքականությունների ու համակարգերի ձևավորման հարցերում:	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Համապատասխանում է**

ՍԿԶԲՈՒՆՔ II.5. Խորհրդի նախագահը

Խորհուրդը ղեկավարում է նախագահը, ով պատասխանատու է խորհրդի արդյունավետ գործունեության համար: Նախագահը պետք է ունենա անկախ և անաչառ դատողություն, խթանի խորհրդի և կազմակերպության գործունեության թափանցիկությունն ու խորհրդում քաջալերի բանավեճի մշակույթը:

Նախագահը պետք է նպաստի խորհրդի գործադիր և ոչ գործադիր անդամների միջև կառուցողական հարաբերությունների ձևավորմանը և ապահովի, որ խորհրդի ոչ գործադիր անդամները տեղեկացված որոշումներ կայացնելու համար ժամանակին ստանան ճշգրիտ ու էական տեղեկատվություն:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.5.1.	Խորհրդի նախագահն ապահովում է օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների իրականացումը:	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Համապատասխանում է**

II.5.2.	Խորհրդի նախագահը խորհրդի ոչ գործադիր անդամ է:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է** /Խորհրդի նախագահն է«Ատոմային Էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական Ինստիտուտ» («Հայատոմ» ՓԲԸ) գլխավոր տնօրենը/

ՍԿԶԲՈՒՆՔ II.7. Խորհրդի անդամների պարտականությունները

Խորհրդի անդամները պետք է գործեն լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, պատշաճ ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով կազմակերպության ու մասնակիցների լավագույն շահերից և հաշվի առնելով կազմակերպության շահակիցների շահերը:

<u>Հայտարարագրում</u>

II.7.1.	Խորհրդի անդամը գործում է օրենսդրությամբ և կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված իր իրավասությունների շրջանակում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**
II.7.2.	Խորհրդի անդամը որոշումներ կայացնելիս կիրառում է անկախ դատողություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**
II.7.3.	Խորհրդի անդամը երրորդ անձանցից չի ընդունում այնպիսի օգուտներ, որոնք կարող են դիտարկվել որպես ոչ ողջամիտ և հանգեցնել կազմակերպության կամ դրա հետ փոխկապակցված անձանց հետ շահերի բախման:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**
II.7.4.	Խորհրդի անդամը հայտնում է կազմակերպության կողմից կնքվող գործարքում կամ ձեռքբերվող պայմանավորվածություններում անձնական ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն ունենալու վերաբերյալ և ներկա չի գտնվում գործարքը կնքելու մասին որոշման քննարկմանն ու քվեարկությանը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**

II.7.5.	Խորհրդի անդամը բավարար ժամանակ և ջանքեր է գործադրում իր պարտականությունները պատշաճ կատարելու համար:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**
II.7.6.	Խորհրդի անդամն իր պարտականությունները կատարում է անձամբ:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**

ՍԿԶԲՈՒՆՔ II.8. Խորհրդի էթիկական հանձնառությունը

Խորհուրդը պետք է հետևի բարձր էթիկական չափորոշիչների:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.8.1.	Խորհուրդը հաստատել է կազմակերպության կորպորատիվ վարքականոնները:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Չի համապատասխանում**

ՍԿԶԲՈՒՆՔ II.9. Տեղեկատվություն և մասնագիտական խորհրդատվություն ստանալու խորհրդի անդամների իրավունքները

Իր պարտականությունները պատշաճ կատարելու համար խորհրդի անդամը պետք է հասանելիություն ունենա և համոզված լինի, որ ստանում է արդիական, հավաստի և համապատասխան տեղեկատվություն: Անհրաժեշտության դեպքում նա պետք է հնարավորություն ունենա կազմակերպության միջոցների հաշվին ներգրավել արտաքին անկախ խորհրդատվություն:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.9.1.	Խորհրդի անդամները պատշաճ ծանուցվում են նիստերի հրավիրման վերաբերյալ, ողջամիտ ժամկետներում ստանում են նիստի օրակարգում քննարկվելիք փաստաթղթերն ու տեղեկությունները:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**
II.9.2.	Խորհրդի անդամները հասանելիություն ունեն կազմակերպության կորպորատիվ քարտուղարի գործառույթներն իրականացնող անձին:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է** / կազմակերպության կորպորատիվ քարտուղարի գործառույթներն իրականացնում է Խորհրդի քարտուղարը/

ՍԿԶԲՈՒՆՔ II.10. Խորհրդի գնահատումը

Խորհուրդը կանոնավոր հիմունքներով պետք է գնահատի իր կատարողականը և որոշի իր անդամների փորձառության ու կարողությունների համադրության պատշաճությունը:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.10.1.	Խորհուրդն ապահովում է իր ինքնագնահատումը որպես մեկ ամբողջություն:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Չի համապատասխանում**

ՍԿԶԲՈՒՆՔ II.12. Խորհրդի անդամների առաջադրումը

Խորհրդի անդամների առաջադրման և ընտրության գործընթացները պետք է լինեն թափանցիկ ու կանոնակարգված: Խորհրդի անդամների ընտրությունը պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշների վրա:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
II.12.1.	Կազմակերպությունն ունի խորհրդի անդամների առաջադրման և ընտրության փաստաթղթավորված ընթացակարգեր և ապահովում է դրանց հասանելիությունը մասնակիցներին:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է** **/Ընկերությունն ունի մեկ բաժնետեր, Խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության առ 6 նոյեմբերի 2003 թվականի N 1694-Նորոշումով/**
II.12.2.	Խորհրդի կազմը պարբերաբար թարմացվում է՝ երաշխավորելու, որ խորհրդի կարողությունները բավարար են գործարար մարտահրավերներին դիմակայելու համար:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է** **/Ընկերությունն ունի մեկ բաժնետեր, Խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության առ 6 նոյեմբերի 2003 թվականի N 1694-Նորոշումով/**
II.12.3.	Խորհրդի գործող անդամն առաջադրված թեկնածուների ցանկում գտնվելու (վերընտրվելու) դեպքում ներկայացվում է պատշաճ հիմնավորում:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է** **/Ընկերությունն ունի մեկ բաժնետեր, Խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության առ 6 նոյեմբերի 2003 թվականի N 1694-Նորոշումով/**

Գլուխ III. Ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ

ՍԿԶԲՈՒՆՔ III.1. Ներքին հսկողություն

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին հսկողության արդյունավետ գործընթացներ ու ընթացակարգեր՝ կազմակերպության կողմից ֆինանսական, ոչ ֆինանսական և հաշվապահական տեղեկատվության ամբողջականությունն ապահովելու, հաշվետվողականությունը խթանելու և խարդախությունները կանխելու համար:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
III.1.1.	Կազմակերպության ներքին հսկողության շրջանակները սահմանված են (առկա են բյուջետավորման, ֆինանսական սահմանափակումների, կրկնակի ստուգումների գործող կառուցակարգեր, գործարար գործընթացների կառավարումը և հետագծելիությունն ապահովող ընթացակարգեր, հաշվետվողականության և հաղորդակցման կառուցակարգեր, հստակեցված է կառավարման մարմինների, ստորաբաժանումների իրավասությունների շրջանակը, աշխատակիցներն ընկալում են ռիսկերի, այդ թվում՝ համապատասխանության ռիսկի իրավատեր լինելը և այլն):	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Համապատասխանում է** **/Կազմակերպությունն ունի տնտեսական անվտանգության խումբ/**
III.1.2	Կազմակերպության գործադիր մարմինն ապահովում է ներքին հսկողության արդյունավետ համակարգի ձևավորումն ու պահպանումը սահմանված շրջանակներում:	**Համապատասխանում է**	**Համապատասխանում է մասամբ**	**Չի համապատասխանում**	**Համապատասխանում է**

ՍԿԶԲՈՒՆՔ III.4. Կազմակերպության ներքին աուդիտը

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին աուդիտոր/ներքին աուդիտի ստորաբաժանում, որն անկախ և օբյեկտիվ հավաստիացումներ ու խորհուրդներ է տրամադրում կազմակերպության խորհրդին և գործադիր մարմնին կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման, կորպորատիվ կառավարման համակարգերի համարժեքության ու

արդյունավետության վերաբերյալ և աջակցում կազմակերպության նպատակների իրագործմանն ու գործունեության բարելավմանը:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
III.4.1.	Ներքին աուդիտորը նշանակվել է խորհրդի կողմից և հաշվետու է վերջինիս:				**Չի համապատասխանում** **Ընկերության ներքին աուդիտն իրականացվում է ՀՀ Կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման պահանջների համաձայն:**
III.4.2.	Խորհուրդը հաստատել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:				**Չի համապատասխանում** Ընկերության ներքին աուդիտն իրականացվում է ՀՀ Կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման պահանջների համաձայն:

Գլուխ IV. Տեղեկատվության բացահայտում և թափանցիկություն

ՍԿԶԲՈՒՆՔ IV.1. Կազմակերպության տեղեկատվական քաղաքականությունը

Կազմակերպությունը պետք է ապահովի իր թափանցիկությունը, այդ թվում՝ իր ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, կայունության, սեփականության և կորպորատիվ կառավարման բոլոր էական հարցերի վերաբերյալ արդիական և արժանահավատ տեղեկատվության ժամանակին բացահայտումը:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.1.1.	Կազմակերպության տեղեկատվության բացահայտման եղանակները մասնակիցների և այլ շահակիցների համար ապահովում են համապատասխան տեղեկատվության հավասար, ժամանակին և տնտեսապես արդյունավետ հասանելիություն:				Համապատասխանում է
IV.1.2.	Տեղեկատվության պարբերական բացահայտումները ուղեկցվում են կազմակերպության էական զարգացումների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմամբ:				Համապատասխանում է
IV.1.3.	Կազմակերպությունը երաշխավորում է գաղտնի, ներքին տեղեկությունների պահպանումը և իր տեղեկատվական անվտանգությունը:				Համապատասխանում է

ՍԿԶԲՈՒՆՔ IV.2. Կազմակերպության հաշվետվությունները

Կազմակերպության կողմից էական հարցերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը պետք է ներառի, սակայն չսահմանափակվի տարեկան հաշվետվությունների հրապարակմամբ:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.2.1.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի նախագահի և գործադիր մարմնի ղեկավարի ուղերձները:				**Չի համապատասխանում**
IV.2.2.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է գործադիր մարմնի զեկույցը:				**Չի համապատասխանում**
IV.2.3.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը:				**Համապատասխանում է**
IV.2.4.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է փոխկապակցված կողմերի հետ գործարքների մասին տեղեկատվությունը:				**Համապատասխանում է**

IV.2.5.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է իրական շահառուների մասին տեղեկատվությունը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է /ՀԱԷԿ ՓԲԸ-ն ունի մեկ բաժնետեր/**
IV.2.6.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**
IV.2.7.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների և գործադիր մարմնի հակիրճ կենսագրությունը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**
IV.2.8.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:	Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	**Համապատասխանում է**

ՍԿԶԲՈՒՆՔ IV.3. Կազմակերպության արտաքին աուդիտորը

Կազմակերպությունը պետք է ենթարկվի արտաքին աուդիտի անկախ, կոմպետենտ և որակավորված աուդիտորական կազմակերպության կողմից՝ աուդիտի, էթիկայի և անկախության միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ խորհրդին ու մասնակիցներին ողջամիտ հավաստիացում տրամադրելու այն մասին, որ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով, արժանահավատորեն արտացոլում են դրա ֆինանսական վիճակը, գործունեության ֆինանսական արդյունքները և պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքներին համապատասխան:

<u>Հայտարարագրում</u>

#	Դրույթ	Համապատասխանության կարգավիճակը			Բացատրություն
		Համապատասխանում է	Համապատասխանում է մասամբ	Չի համապատասխանում	
IV.3.1.	Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են արտաքին աուդիտի:				**Համապատասխանում է** արտաքին աուդիտ իրականացնող անձը ընտրվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն, անցկացվող մրցույթի արդյունքներով:
IV.3.2.	Աուդիտորական կազմակերպության թեկնածությունն առաջադրում է խորհուրդը, նշանակում է (հաստատում է) ընդհանուր ժողովը:				**Համապատասխանում է** Ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և Ընկերության կանոնադրության 13.4-րդ կետի 13.4.1 ենթակետիկետի «ժա» պարբերության, Խորհուրդն է սահմանում աուդիտի վճարման չափը:
IV.3.3.	Արտաքին աուդիտորը հաշվետու է մասնակիցներին:				**Համապատասխանում է**